

Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունվարի 5-ին, չորեքշաբթի. «Ճրագալոյց Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Երեկոյան ժամը 16-ին Մայր տաճարում կատարվում է Ճրագալույցի ավանդական ժամերգություն, որի ընթացքում կարդացվում են, ըստ Ճաշոցի, օրվա խորհուրդը նշող աստվածաշնչական ընթերցումները: Հոգևոր հեմարանի ուսանողները եկեղեցու բեմից ընթերցում են «Դանիէլի գիրքը»:

Օրվա պատարագիչն էր վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է Ծննդյան նախատոնակ: Մայր տաճարում հնչում է Ծննդյան հրաշալի շարականը՝ «Խորհուրդ մեծ»: Հավարտ Ծննդյան նախատոնակի Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է Վեհարան, իսկ միաբանության անդամները և հեմարանի ուսանողները՝ միաբանական սեղանատուն, ուր Ավետարանի ընթերցմամբ ու աղոթքով օրհնվում են Մայր Աթոռի աղն ու հացը: Ապա ներկաները ուրախ սրտով վայելում են նավակատիքի ավանդական ընթրիքը:

Հունվարի 6-ին, հինգշաբթի. «Տօն Ծնընդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Օրվա մեծ տոնի առիթով Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արսեն եպս. Բերբերյանը: Մայր տաճարը լիքն է հավատացյալների հոծ բազմությամբ: Պատարագին ներկա են տեր և տիկին Նահապետ Նահապետյանները՝ Բուենոս-Այրեսից, հայտնի երգահան-երաժիշտ Լորիս Ճգնավորյանը՝ Լոնդոնից, և այլ հրավիրյալներ:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Ավագ սեղան՝ շնորհավորելու ողջ հայության Նոր տարին և ս. Ծննդյան տոնը, և ապա քարոզում է օրվա մեծ խորհրդի նշանակության մասին: Սույն քարոզը երեկոյան ժամը 23-ին ձայնասփռվում է Երևանի ռադիոկայանից արտասահմանյան հաղորդումների ժամանակ: Հայրապետական սույն քարոզը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրի այս համարում (էջ 3):

Վեհափառ Հայրապետն այնուհետև Մայր տաճարում նախագահում է Զրօրհնյաց հանդիսությանը: Տաճարում հնչում են «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ», ինչպես նաև «Այսօր ձայնն հայրական», «Ով զարմանալի» երգերը: Ս. պատարագի երգեցողությանն իր սրտագին մասնակցությունն է բերում նաև անվանի երգչուհի Գոհար Գասպարյանը՝ ս. պատարագի մի շարք երգերի մենակատարումով:

Ս. պատարագից հետո Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է Վեհարան, ուր ընդունում է շնորհավորանքներ ս. Ծնընդյան տոնի առթիվ: Այստեղ ներկա էին ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը, տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, արտասահմանյան ուխտավորները և այլ պաշտոնական անձինք:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը, ս. Ծննդյան տոնի առթիվ, տրվում է ճաշկերույթ, որին ներկա էին տ. Կոմիտաս, տ. Արսեն, տ. Գևորգ սրբազանները, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ դոկտ.-պրոֆ. Սարգիս Մելիքսեթյանը, տեր և տիկին Նահապետ Նահապետյանները, Լորիս Ճգնավորյանը, Գոհար Գասպարյանը, դոկտ.-պրոֆ. Ռոբերտ Աթայանը, Մայր Աթոռի պատասխանատու աշխատողները և այլ հրավիրյալներ:

Ճաշկերույթին ներկա էին նաև Սարգիս Գասպարյանն ու Անդրանիկ Հասրաթյանը:

Ճաշկերույթի ընթացքում բարիգալստյան և շնորհավորական ջերմ ճառեր են փոխանակում Վեհափառ Հայրապետը, Սարգիս Գասպարյանը, Նահապետ Նահապետյանը և Լորիս Ճգնավորյանը:

Ս. Ծննդյան ճաշկերույթն ավարտվում է Վեհափառ Հայրապետի գոհաբանական աղոթքով: